

ՎԱՏԻԿԱՆԻ ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԿԼԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Անցյալ դարի 30—40-ական թվականներից սկսած կաթոլիկ քարոզիչներն աշխուժացնում են իրենց գործունեությունը Արևմտյան Հայաստանում:

Վատիկանը, որ ուշի-ուշով հետևում էր արևմտահայ խմորումներին, որդեգրում է պրոպագանդայի առավել ազդու միջոցներ՝ զարկ տալով քարոզչության զուտ կրոնական կողմին: 1830-ական թվականների վերջերից Վատիկանի նոր ծրագրի կենսագործմամբ հանդես եկավ Անտոն Հասունյանը¹, որի կողմնակիցները Հ. Պարոնյանի դիպուկ բնութագրմամբ «նախապատիվ կը սեպեն իրենց իրավունքներն ս. Պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռներուն մեջ»²:

Հասունյանի և նրա կողմնակիցների դեմ դուրս եկան ոչ միայն լուսավորչական հայերը, այլև ավանդապաճ կաթոլիկները: Առաջացավ հակահասունյան հոռի շարժում, որի նպատակն էր հանուն ազգային միասնության պայքարել դավանաբանական վնասակար երկպառակությունների դեմ:

Այդ նպատակն էր հետապնդում 1846 թ. հիմնադրված «Համազգային» ընկերությունը, որին ըստ կանոնադրության, կարող էին անդամագրվել բոլոր հայերը առանց կրոնական խտրության:

Ընկերության գործունեությունը լայն արձագանք գտավ հայ մտավորականության շրջանում: Հիմնվեց լսարան, որտեղ ազգային զգացումներ արթնացնող ճառերով հանդես էին գալիս նրա անդամները: Պեշիկթաշլյանը մեծագույն եռանդով սատարում էր ընկերության նախաձեռնություններին: Նա կոչ էր անում հայ ժողովրդին միավորվել և գործնական միջոցներով ծառայել հայրենիքին: Ասեր հայրենյաց ու միաբանությունն են երկու կարևոր ու առաջին պատճառ ազգի մը ծաղկելուն ու երջանկությանը: Հազար ու բյուր երանի ինծի, թե որ իմ տկար ու նվաստ ձայնս կարենար այսօր ինչպես որ պետք է, ցցնել հայրենասիրության ու միաբանության ազնվությունը, ու անոնց մեծաշահ օգուտները, ու ավելի բորբոքել զանոնք ձեր առաքինի սրտից մեջ»³:

Վարուժանը, անդրադառնալով Պեշիկթաշլյանի այս շրջանի գործունեությանը, գրել է. «Համազգայացը, սա իր տենչանքներուն տենչանքն էր, իր ամենեն ավելի գգված նպատակը: Մեկ միության մեջ տեսնել բոլոր հատվածները եղբայրացած... տեսնել ամենքը մեկ իտեալի օճախին շուրջ հավաքված, անոր բոցովը տաքցած ու խանդավառված...»⁴:

¹ Հասունյանը 1833 թ. ավարտելով Հռոմի պրոպագանդայի դպրոցը, ձեռնադրվում է քահանա և վերադառնում Պոլիս: Այստեղ նա իր շուրջն է համախմբում պտսյամոլ եկեղեցականներին, դառնում նրանց պարագլուխը և Վատիկանի պահանջներին համապատասխան գործունեություն ծավալում:

² Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 106:

³ Մ. Պեշիկթաշլյան, Մատենադրությունք, Կ. Պոլիս, 1870, էջ 120—121:

⁴ Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 357:

Պեշիկթաշլյանին մտահոգում էին հայ ժողովրդի օտարացումը և լեզվի կորուստը։ Ակնարկելով հասունյանների քաղաքականությունը, նա գրում է. «Ազգաստեղծությունն ալ այնչափ բիրտ, զգվելի, վնասակար ու տգեղ է։ Ազգատյացը կը սիրե օտարին խաբեքս փետուրներովը զարդարվիլ ու անով պարծիլ օտարներուն առջին. ողորմելին չի գիտեր, որ վերջապես անոնք կը փետտվին ու ինքը կը մնա մերկ ու խայտառակ. հարցնենք մեյ մը այսպիսիին թե ինքը ի՞նչ աղբ է, հայ չէ, վասն զի ոչ հայություն կը խոստովանի և ոչ ալ անոր լեզուն կ'ընդունի. բայց չի կարծե, որ օտարը ընդունի զայն, որ բուն իր ազգը չուզեր ճանչնալ»⁵։

«Համազգային» ընկերության գործունեությունը թուլացնում է օտարամուտ աղդեցությունը։ Բայց Հասունյանը դիմում է մատնությունների։ Ընկերության գործունեության վտանգավորության մասին նա հայտնում է ոչ միայն Հռոմ՝ պրոպագանդային, այլև Բ. Դռանը, նրա անդամներին ներկայացնում իբրև տերության ապստամբներ։ Արդյունքը լինում է այն, որ 1851 թ. ընկերությունը դադարում է գոյություն ունենալ։

«Համազգայինի» դադարեցումով, սակայն, վերջ չտրվեց հասունյան-հակահասունյան պայքարին, ընդհակառակը, այն ավելի բորբոքվեց։

Արևմտահայ շափածոյում այդ պայքարի շեփորահարը դարձավ Մկրտիչ Պեշիկթաշլյանը։ Զեյթունի ապստամբության արձագանքները հանդիսացող նրա հայտնի բանաստեղծությունները՝ «Հայ քաջորդին», «Թաղումն քաջորդվուն», «Հայ քաջուհին» ունեն քաղաքական, ազատասիրական շեշտված նպատակասլացություն։

Հասունյանների քայքայիչ գործունեության դեմ է ուղղված Պեշիկթաշլյանի «Եղբայր Կմբ մեք» բանաստեղծությունը, ուր քաղաքական շեշտված նպատակասլացությամբ քարոզում է հայ ժողովրդի բաժան հատվածների եղբայրության գաղափարը.

Տո՛ւր փնձ քու ձեռքդ, եղբայր Կմբ մեք,
Որ մըրըրկավ էինք զատված.
Բաղդին ամեն ոխ չարանենգ
Ի մի համբույր ցրվին ի բաց.
Ընդ աստեղդ ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն՝

Ա. Զոպանյանն այս բանաստեղծությունը համեմատելով «Մարսելիեզի» հետ, գրում է. «Այդ երգը էլեկտրականացուց հայ սրտերը, հալեցուց սառույցը, որ դեռ կմնար հռովմեական և լուսավորչական հայոց միջև»⁷։

Հասունյանի դեմ է ուղղված նաև Պեշիկթաշլյանի «Հանելուկ» երգիծական բանաստեղծությունը, ուր նա ծաղրում է ազգադավ հովվապետին, որի անունը իմաստունները բարկությամբ են լսում, տգետները՝ հարգանքով.

Անունով մեծ ճգնավոր
Եվ հմ հովիվ պաշտոնով,

5 Մ. Պեշիկթաշլյան, Նշվ. աշխ., էջ 125։

6 Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան. 1961, էջ 27։

7 Ա. Զոպանյան, Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 206։

Գործքով գիտնաս ինչ ըլլալս

Պիտի դողաս սարսափով⁸:

Իր դրամատիկական ստեղծագործություններում նույնպես Մ. Պեշիկթաշլյանն անդրադարձել է հասունյանների հակաժողովրդական քաղաքականությանը: Նրա ողբերգությունների թեման վերցված է պատմական անցյալից, սակայն գրանցում բարձրացվում էին ժամանակի հայ հասարակական կյանքի հուզող հարցերը, առաջին հերթին ազգի դավաճանների դեմ պայքարելու անհրաժեշտության գաղափարը, որի ապացույցներն են «Արշակ Բ» և «Կոռնակ» ողբերգությունները: Ահա թե ինչպես է բնութագրում իրեն Արշակ թագավորը, որի կերպարով ներկայացված է Հասունյանը. «Լսե՛ Հայաստան ու սարսափե՛. Լսե՛ դուն ալ հայոց ժողովուրդ, ո՛վ որ ինծի պես յուր ազգին վնասովը կուզե բարձրանալ, ով որ ինծի պես ատելությունն ու նախանձը ձեռքը գործիք առած, ընտանի կռիվ, թշնամություն ու քայքայումն կը պատճառե յուր հայրենյացը մեջ, ու օտարներուն ձեռքը կը մատնե յուր ազգը, իրեն բաժին ու ժառանգություն կը թողում ճակտիս վրայի անեծքը, ինքնադատ խիղճս ու անդամանելի կորուստս, ուր գահավեժ կը կործանիմ ես»⁹:

Առավել բնորոշ է «Կոռնակը», որտեղ, հանձին Բզնունյանց դավաճան նախարար Կոռնակի, Պեշիկթաշլյանը նկատի ունի դարձյալ Անտոն Հասունյանին: Այս առթիվ արևմտահայ թատրոնի պատմաբան Գ. Ստեփանյանը գրում է. «Թե մի պահ Կոռնակի տեղը դնենք Վատիկանի գործակալ, հայ ժողովուրդի ամենակատաղի հակառակորդներից Անտոն Հասունյանին, իսկ հեղինակը այդպիսի նպատակ ունեցել է այդ կերպարը կերտելիս, և նրա հակառակորդ ներսեսին փոխարինենք «Համազգյաց» ընկերության ներկայացուցիչներով, ապա բեմում կունենայինք ոչ թե պատմական անցյալին վերաբերող մի ողբերգություն, այլ ժամանակակից քաղաքական մի պիես»¹⁰: Վկայություն կա այն մասին, որ այդ պիեսի դրական հերոս ներսեսի դերը մի անգամ կատարել է Պեշիկթաշլյանը և ապացուցելու համար, թե ինքը հանձին Կոռնակի նկատի ունի Հասունյան, ներսեսի՝ Կոռնակին տուղված «Դուն որ շարության մեջ քարացեր, պնդացեր ես» միտքը արտասանել է «դուն որ շարության մեջ հասունցե ես» ձևով¹¹:

Արևմտահայ իրականության մեջ գրվել են նաև դրամատիկական այլ ստեղծագործություններ, որոնցում դարձյալ քարոզվում են հայ ժողովուրդի միասնության, Վատիկանի դեմ պայքարելու գաղափարը: Եվ եթե ի. Գալֆայանի, Պ. Դուրյանի պատմական ողբերգություններում այդ միտքն իր արտահայտությունն է գտել դավաճան նախարարների և իշխանների քննադատության միջոցով, ապա Ռ. Սետեֆճյանը կաթոլիկների քարոզչության տխուր հետևանքները ցուցադրող հատուկ պիես է գրել, նյութ դարձնելով Կարնո շրջանի Հինձք գյուղում տեղի ունեցած և երկար ժամանակ հայ մամուլը զբաղեցրած մի ահալիոր ոճիր, որին զոհ են գնացել միմյանց սիրող, բայց տարբեր դավանանքի պատկանող երկու անմեղ էակներ:

8 Մ. Պեշիկթաշլյան, Մատենադրությունք, էջ 43:

9 Նույն տեղում, էջ 265 (ընդգծումը մերն է):

10 Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 177:

11 Նույն տեղում, էջ 178: Վ. Սաֆարյան, Մ. Պեշիկթաշլյան, Երևան, 1972, էջ 132—133 (այս և հետագա ընդգծումները բնագրային են):

Հասունյան և հակահասունյան պայքարն իր արտացոլումն է գտել նաև գեղարվեստական արձակույթում: 1851 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Հովսեփ Վարդանյանի «Աղապիի պատմությունը» հայատառ թուրքերեն վեպը, որը ժամանակին բարձր է դնահատվել Մ. Նալբանդյանի կողմից. «Աղապիին» արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննության: Բանականության կողմից և հոգևորական հարազատության մասին շատ բարձր է եվրոպական ամենավեր Վիպասանություններից: Մենք ցավում ենք և ցավելով չենք կարող շնորհագրել մեր լեզվակցի և դրաբարակիցը, որ մինչև այժմ հայերեն չթարգմանեցին այդ գործը: ... Որանի թե մեկ օր հայերեն կարդալինք այդ հույակապ և ազնիվ գործը»¹²:

Այդ վեպին լայնորեն անդրադարձել է արևմտահայ մամուլը: Հ. Սվաճյանը գրել է. «Մեր մեջը այնքան տարիքի վեր բարոյականի ուսուցիչ լրագիրները այնքան ազդեցություն չունեցան, որքան որ ունեցան զանի Ա. Գ. Ա. Պի. Հի. Բ. Ա. Ս. ի և Պ. Շ. Պ. Ղ. Ա. Զ. Բ. Ս. Ա. Ն. Ս. ի քսված հատորները»¹³:

«Աղապիին» չի վրիպել նաև հետադեմ տարրերի ուշադրությունից. գիրքը համարվել է վտանգավոր ու վնասակար և հատուկ կոնդակով բանադրվել է կաթոլիկ համայնքի հովվապետ Անտոն Հասունյանի կողմից¹⁴: Վերջինս զգուշացնում է ծնողներին իրենց գավակներին հեռու պահել «Աղապի հիթեայն-սի» անվամբ դարերնուս ապականած մտքերով տաճկերեն շարադրված ու հոս տպված գրքույկն մը»¹⁵:

Նույն Հասունյանի ջանքերով գիրքը արժանացավ նաև Հոռոմի պրոպագանդայի բանադրանքին, որը, սակայն, ավելի նպաստեց նրա տարածմանը: Ֆրանսիացի արևելագետ Դյուրորին վկայում է. «Զնայած հոգևոր իշխանության հետապնդումներին՝ գիրքն ունեցել է հազարավոր ընթերցողներ»¹⁶:

«Աղապի» վեպում, ինչպես նկատվել է, հանձին բացասական հերոս Ֆասիտյանի, հեղինակը նկատի է ունեցել հայոց երգվյալ թշնամի Անտոն Հասունյանին: Ֆասիտյանը կապված էր Կ. Պոլսի գաղտնի կենտրոնի հետ, որը հետևում էր թուրքիայում հայ ժողովրդի երկու հատվածների պայքարին: Այդ է վկայում նրա նամակներից մեկը, ուր գրված է. «Օրեցօր ավելի լավ եմ հասկանում, թե մենք որքան իրավացի էինք, որ վախենում էինք Հակոբից: Հենց այս րոպեիս լուր ստացա, որ մի հայ աղջկա հետ սիրաբանել է: Տեսնենք ինչ ձևով պետք է կարողանանք արգելել այս գործը: Հույսս այն բանի վրա է, որ հայրը մեր ձեռքին է»¹⁷:

Հակոբը կաթոլիկության ազգակործան քաղաքականության դեմ պայքարողների շարքում էր և տարբերություն չէր տեսնում կաթոլիկի ու լուսավորչականի միջև:

Հակոբի հայրը՝ Վիչեն աղան, հակառակ որդուն, Ֆասիտյանի ցանցի մեջ էր և կրոնական դոգմաներից դուրս ոչինչ չէր տեսնում: Նա կորցրել էր մայրենի լեզուն, օտարացել: Խորտակված էին հարազատ ժողովրդի հետ կապող բոլոր կամուրջները: Պատահական չէին Ֆասիտյանի հույսերը կապված Վի-

¹² Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 3, Երևան, 1940, էջ 121:

¹³ «Մեղու», 1857, № 13:

¹⁴ «Տեղեկագիր», 1956, № 11, էջ 104—105:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Յ. Դյուրորե, Нынешние армяне, Тифлис, 1856, стр. 72.

¹⁷ «Աղապիի պատմությունը», Երևան, 1953, էջ 154:

չենի կրոնական համոզմունքների հետ: Երբ վերջինս լսում է որդու սիրային կապի մասին, կատաղած բացականչում է.

— Ինչպե՞ս, իմ տղան հայ աղջի՞կ է առնելու... չէ, այդպիսի բան չի կարող լինել¹⁸:

Ֆասիստյանի ու նրա կողմնակիցների եզվիտյան մեքենայությունները, ի վերջո, հասցրին Հակոբի և Ադապիի սիրո պատմության ողբերգական վախճանին: Սեֆապին զոհ է գնում գիշերադեմ մարդոց դժոխային կրոնամոլության, դավաճանության, որին կարող էր նախանձել և ինքը լոյտլան...»¹⁹:

Հասունյանների դեմ մղվող պայքարի առաջամարտիկներից էր Ծերենցը: Նա իր հողավածներում մերկացրել է հասունյաններին, ցույց տալով նրանց գործունեության աղետարեթ հետևանքները հայ ժողովրդի համար: Նա գրում է, որ Հասունյանը օժտված է այն բոլոր հատկություններով, որոնք հատուկ են իսկական պապականին, այն է՝ «նախանձահուզվածություն, որ ամեն տեսակ ներողամտություն կը վտարե, ատելության ոգի ընդդեմ ամեն մարդու, ամեն կրոնի, ամեն ազգի, ամեն դավանության որ արտաքո է հոռմեական եկեղեցվո և մինչև գերեզմանեն անդին հալածանքն իրեն սկզբունքն է»²⁰: Հասունյանի մատնությունների հետևանքով Ծերենցը բազմիցս կասկածանքի է ենթարկվել Բ. Դռան կողմից, նույնիսկ աքսորվել Կիպրոս կղզի: Չնայած հալածանքներին, նա իր պայքարը շարունակել է ոչ միայն հրապարակախոսական հողավածներով, այլև պատմական վեպերով: «Թորոս Լևոնի» վեպում նկարագրելով Կիլիկյան իշխանության սկզբնավորման շրջանի դեպքերը, վիպասանը բարձրացնում է հայ ժողովրդի միասնության, համախմբման հարցը: Նա միաժամանակ անդրադառնում է XII դ. հայ իրականությանը հուզող հարցերից մեկին՝ դավաճանական վեճերին և խստորեն քննադատում հունադավան հայերին, ցույց տալով նրանց գործունեության աղետարեթ հետևանքները հայ ժողովրդի համար:

Հակոբ Պարոնյանը ևս մեծ եռանդով է մասնակցել հակահասունյան պայքարին, այդ նպատակին են ծառայել նրա թե՛ հայերեն, և թե՛ հայատառ թուրքերեն գործերը, որոնցում ծաղրել է կաթոլիկացած հայերի ֆրանսամոլությունը, օտարացումը:

Պատահական չէ, որ «Ազգային ջոջերոսմ» առկա է Անտոն Հասունյանի դիմանկարը. «1810 թվականին ծնավ Անտոն Հասունյանը... Յուր ծննդյան գիշերն ամեն մարդ սկսավ իրարու հարցնել, թե ինչո՞ւ գիսավոր աստղ շերեփեցավ, վասն գի նախնիք գիսավորներն շարագուշակ նշան համարելով կը հավտային, թե նախ գիսավորը կուգա և ապա փորձանքը»²¹: Պարոնյանը էջ առ էջ նկարագրում է Հասունյանի խարդախ գործունեությունը, ցույց տալիս, թե նա պատրիարք դառնալուց հետո էլ ինչպիսի ստրկամտությամբ է ծառայել օտարներին, մոլեգնությամբ պայքարել այն հայերի դեմ, որոնք ցանկացել են իրենց ազգային իրավունքները չզոհաբերել դավաճական նկատառումներին: Նրան նմանեցնելով ծնողասպանի, Պարոնյանը գրում է. «Երբ հարցվեցավ Սողոմի, թե ինչո՞ւ օրենք մը չդրավ հայրասպաններու համար, չէի

18 Նույն տեղում, էջ 156:

19 Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 120:

20 «Փորձ», 1879, № 5, էջ 193:

21 Հ. Պ ա Ր Ո Ն Յ Ա Ն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 106:

կարծեր, որ, պատասխանեց Աթենքի օրենսդիրն, պիտի գտնվին մարդեր, որ համարձակին իրենց հայրն կամ մայրն սպանելու»²²։

Մեծ Երզնիսի ժողովում է ժողովրդի այն խավերին, որոնք ապրում էին ֆրանսիական կենցաղով, մոռացել մայրենի լեզուն, կորցրել էին առհասարակ ազգային նկարագիրը։ Այդպիսիք, ըստ Պարոնյանի, հայ չեն։ Նա գրում է. «Բերայի մեջ հայու ո՞րչափ տուն կա... Ոմանք կը կարծեն, թե Բերայի մեջ Երկու հազար տուն կա հայու. ոմանք կը պնդեն, թե երկու հազար հինգ հարյուր տուն կա. ըսողներ ալ կան, թե հազար հինգ հարյուր է Բերայի տուներուն թիվը... չափազանցություն, չափազանցություն... չափազանցություն... իմ կարծիքովս հաղիվ երեք տուն հայ կա Բերայի մեջ...»²³։

Կաթոլիկացած խավի որոշ ներկայացուցիչներ ասում էին լուսավորչական հայերին, և իրենց համար մեծ վիրավորանք համարում հայ կոչվելը։ Այս առումով ուշագրավ է Պարոնյանի «Երկու օրիորդ» պատմվածքը, գրված հայատառ թուրքերենով²⁴։ Երկու ընկերուհիների զրույցից պարզվում է, որ Լուցիքան մոլեռանդ կաթոլիկ է, ապրում է ֆրանսիական վարք ու բարքով։ Մյուս ընկերուհին՝ դավանակից Ֆիլոն, թեև ապրում է նույն կենցաղով, բայց նա հասկացել է, որ իրենք նույն ժողովրդի զավակներն են և գերադասում է պապական ավանդույթները. «Մենք քիչ մըն ալ հայ ենք եղեր»,— ասում է նա։ Իսկ Լուցիքան իմանալով, որ օրիորդ Ֆիլոն հրապուրվել է հայ երիտասարդով, չի թաքցնում իր արհամարհանքը, ասելով. «Հա՛յ ըսիր. թող կորսվի, ինտո՞ր ալ այդ հայ երիտասարդին սիրտդ կուտաս, մեղք քո կուստոյիդ։ Անոնք գեռ սիսեռի քյուֆտեն կը հոտին։ Հետո մեր պոզիսիոնին գլխովին հակառակ են... Ես անոնց բարև տալ անգամ չեմ ուզեր։ ...Բայց զգույշ հա՛, էրկան մը համար դժոխքի բաժին չըլլաս։ Ավելի լավ է հասունյան մնաս ու դրախտ երթաս, քան թե հայ պսակով դժոխքի արժանանաս»²⁵։

Պարոնյանի՝ օտարամոլությունը քննադատող հայատառ թուրքերեն երկերի մեջ կարևոր տեղ է գրավում «Լեռը մարգարեին քովը չերթա նե՛ մարգարեն լեռան քովը կերթա» երգիծավեպը²⁶, որի հերոսը՝ Նիկողիմոս աղան, առևտրական է, ապրում է հանգիստ, հին վարք ու բարքով, իր խանութն ունի ու իր մտահոգությունները։ Սակայն ամեն ինչ փոխվում է, երբ ընտանիք է մտնում «ալաֆրանկան»։ Կինը, աղջիկները տառապում են ֆրանսամոլությունից։ Մի որոշ ժամանակ ֆրանսիական կենցաղը գուր չի գալիս Նիկողիմոսին։ Հետո փոխվում է ամեն ինչ. նրան փեսա է դառնում թեթևասովիկ մի երիտասարդ՝ Ժորժ անունով, որը սկսում է Նիկողիմոսի առևտրական գործերը «ալաֆրանկա» ձևով վարել։ Ժորժին հաջողվում է Նիկողիմոսին էլ «ալաֆրանկա» դարձնել։ Նիկողիմոս աղան դառնում է մոնսիյո Նիկողիմոս, որը «ալաֆրանկան առաջադիմություն է» բղավելով ուրիշներին էլ է խորհուրդ տալիս իրեն հետևել։ Ի վերջո Նիկողիմոսը հասկանում է «ալաֆրանկայի» չարիքները և խոստովանում. «Ես ալ մեղավոր եմ. երիտասարդներուն հարմարվինք ըսինք, պապերնուս ճամբայի՛ էլանք. լեռը մարգարեին քովը չերթա նե՛ մարգարեն լեռան քովը կերթա ըսինք, գացինք իշտե»²⁷։

²² Նույն տեղում, էջ 107։

²³ Նույն տեղում, հ. 3, էջ 190։

²⁴ «Մեղու», 1873, № 201։

²⁵ Նույն տեղում։

²⁶ «Դարուն», 1972, № 11, էջ 34։

²⁷ Նույն տեղում, էջ 54։

Գ. Ստեփանյանի բնորոշմամբ՝ «Պարոնյանի այս երկը պետք է դիտել որպես գեղարվեստական արտահայտությունը օրհասական այն պայքարի, որ հայ ժողովուրդը և նրա առաջավոր զավակները 1850—70-ական թթ. մղում էին Վատիկանի գործակալների դեմ»²⁸։

Թուրքախոս հայերի կաթոլիկական մոլեռանդությունն է պատկերված Գր. Զոհրապի «Արմենիսա» գողտրիկ նովելում։ Թվում է, թե այստեղ գործողության հիմնական առանցքը սերն է, մինչդեռ դժվար չէ նկատել նրա խորը գաղափարական բովանդակությունը։ Նովելի հերոսուհին՝ Արմենիսան, իր գաղափարներով նման է Պարոնյանի Լուցիքային. նա մոլեռանդ կաթոլիկուհի է և լուսավորչական հայերի մասին ծաղրանքով է խոսում։

Արմենիսան սիրում է մի երիտասարդի, առանց իմանալու նրա կրոնական դավանանքը։ Հանգույցը լուծվում է բոլորովին պատահական. հայ քահանան մոտենում է երիտասարդին և հիշեցնում հաղորդվելու մասին։ Աղջիկը հասկանում է, որ տղան կաթոլիկ չէ։ Սերը վերածվում է ատելության։ Բնչպես որ գուշակեր էի, պարզ կաթոլիկուհի մը չէր, այլ հայության դիմերիմ թշնամի մը, մեր ազգին պես խեղճ ու ողորմելի զարմե մը սերած ըլլալուն նախատինքը մեր ազգին դեմ անհաշտ ու վայրենի ատելություն մը առաջ բերած էր իր մեջ... հասունիսթի և անթիհասունիսթի կովին տաքության մեջ, ծայրահեղ ու կատաղի հասունիսթ մը եղած էր, անկատար հայ մը ըլլալեն կատարյալ լատին մը ըլլալը նախամեծար համարելով», — գրում է հեղինակը²⁹։

Արևմտահայ իրականության մեջ կաթոլիկության դեմ ծրագրված պայքար էր տարվում նաև թարգմանական գրականությանը։ Ֆրանսերենից թարգմանվում էին այնպիսի վեպեր, որոնք ցույց էին տալիս կաթոլիկ հոգևորականության տխուր դերն առհասարակ։ Նման նպատակ է հետապնդել, օրինակ, Ա. Ֆերենլի «Հավատաքննության գաղտնիքները» վեպի թարգմանությունը և հրատարակությունը 1850-ական թվականներին թե՛ Թիֆլիսում և թե՛ Կ. Պոլսում։ Վեպում նկարագրված են կրոնի անվան տակ կատարվող այնպիսի ոճիրներ, որոնք դուրս են մարդկային բանականությունից։

Կաթոլիկ հոգևորականության դժոխային արարքները դատափետելու իմաստով նվազ արժեքավոր չէ էժեն Սյուրի «Թափառական հրեան», որտեղ հեղինակը ցույց է տալիս, թե կաթոլիկ եկեղեցին մի մեծ ժառանգության տիրանալու համար ինչպիսի անմարդկային, բարբարոսական եղանակներով աշխատել է ոչնչացնել վիթխարի գումարի ժառանգորդներին, իր ցանցը տարածելով մինչև հեռավոր երկրներ։ Վեպի բացասական հերոս Ռոդենը աներևակայելի ոճիրներ ծրագրող դաժան մարդ է։

Հասկանալի է, որ նման մի գործ կարող էր օգտակար լինել այն պայքարում, որ հայերը մղում էին Անտոն Հասունյանի ու նրա կողմնակիցների դեմ։ Ուստի, պատահական չէ, որ այս գրքի թարգմանությունը ձեռնարկել են առաջավոր հայ մտածողները միաժամանակ երեք տարրեր վայրերում։ Փարիզում՝ Ստեփան Ոսկանյանը (1853), Կ. Պոլսում՝ Կ. Փանոսյանը (1854), Մոսկվայում՝ Միքայել Նալբանդյանը (1857)։

«Թափառական հրեան» վերածվել է նաև պիեսի և բեմադրվել Հ. Վարդույանի թատերախմբի վոդևիլից, բեմական խոսքի միջոցով ևս հանդիսականներին ցույց տալով կրոնի պաշտոնյաների ազգադավ գործունեությունը։

²⁸ «Պատմա-բանասիրական հանգես», 1971, № 3, էջ 28։

²⁹ Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 162։

Ինչպես նշել է Մ. Նալբանդյանը, «Թափառական հրեայի» թարգմանության նպատակն էր բաց անել ժողովրդի աչքը, ցույց տալ «... հիսուսյան աբեղաների անբրիտանյա և բարբարոս վարքն ու բարքը»³⁰:

Հակահասունյան պայքարը հիմնականում գլխավորում էին Մխիթարյանների մոտ կրթություն ստացած հայ առաջավոր մտավորականները, ուստի Անտոն Հասունյանը պայքար է սկսում նաև Մխիթարյանների դեմ³¹, մեղադրելով նրանց ազգայնական գաղափարների հրահրման մեջ, որոնք «... փոխանակ կրոնասեր աշակերտներ տալու ազդին, ճայրենասեր աշակերտներ կուտային»³², Այն տարիներին, երբ մամուլն ու գրականությունը եռում էր առաջադեմ գաղափարներով, Վատիկանը արգելել էր Մխիթարյաններին ազգային բովանդակությամբ գրքեր տպագրել կամ «Բազմավեպ» հանդեսում հայ ժողովրդի անցյալի ուշագրավ դրվագներին տեղ տալ:

Այսպիսով, կաթոլիկական ներթափանցման դեմ հայ ժողովրդի մղած պայքարը իր անմիջական արձագանքն է գտել հայ գրականության մեջ. մեր առաջադեմ գրողները անդրադառնալով այդ ցավոտ խնդրին, ստեղծեցին բարձրարժեք գեղարվեստական երկեր, որոնք իրենց մնայուն տեղն ունեն հայ գրականության պատմության մեջ:

ОТРАЖЕНИЕ БОРЬБЫ ПРОТИВ ВАТИКАНА В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

КЛАРА ГРИГОРЯН

Резюме

Одним из кардинальных вопросов многовековой истории армянского народа является борьба против притязаний Ватикана. В 40—60 годах XIX века эта борьба получила такое развитие, что печать, художественная литература, театр сделали ключевым вопрос вскрытия катастрофических последствий католической пропаганды в армянской действительности и выдвижения идеи национального единства.

Против притязаний Рима выступали передовые мыслители того времени М. Налбандян, М. Пешекташлян, Мамурян, Церенц, Гр. Зограб, А. Паронян и др.

30 Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 2, Երևան, 1947, էջ 66:

31 Հասունյանը հրատարակում է մի «Չարամատյան», ուր շարադրել էր իր մեղադրանքները ընդդեմ Մխիթարյանների:

32 «Մասիս», 1887, № 3875: